Ի Զ.

Մխիթար Սասնեցու* և Մովսէս «քաջ քարտուղարի» (Արծէացի՞) կողքին։ Ըստ Փիրղալէմեանի գերեզմանի վրայ արձանագրուած է. «Խաչս կանգնեցաւ ի բարեխօսութիւն Թումաս մեծի բարունապետի ամենայն Հայոց, որ գնաց ի նորոգումն սուրբ Էջմիածնի և փոխեցաւ առ Աստուած թվ. ՊՂԶ»։ Ուրիշ տեղ Փիրղալէմեանը ծանօթութիւնների մէջ Թովմայի մահուան տարեթիւը ՊՂԷ համարում**, որ պարզ սխալ է։ Մենք այդ սխալը արձանագրութեան ե և է տառերի շփոթութեամբ կրացատրէինք, եթէ գերեզմանաքարի ՊՂԶ թուականը չլինէր։ Գուցէ և այս տպագրական կամ անուշադրութեան սխալ է։ Ցամենայն դէպս կասկածի տեղիք լինել չէ կարող Կիրակոս Բանասէրի տուած թուականի մասին, որ այնքան մօտ էր Թովմային և իրազեկ նորա կեանքի բոլոր մանրամասնութիւններին։

Դ.

Թովմայի գրական գործունէութիւնը նոյնպէս նշանաւոր էր ժամանակակիցների համեմատութեամբ։ Նորա երկերի պակը «Պատմութիւն Լանկթամուրայ» աշխատութիւնն է, որ 1860 թուին հրատարակել է Փարիզում Կարապետ վարդ. Շահնազարեան***։ Ձեռագիրների մէջ այդ աշխատութեան վերնագիրն է. «Պատմութիւն համառօտաբար վասն արևելեան թագաւորացն պղծոյն և չար գազանին Լանկ Թամուրայ և այլոցն, զոր արարեալ է քաջ վարժապետին Թումայ վարդապետին»։

Թովմայի մի երկրորդ աշխատութիւնը նորա «Ցիշատակարան» է, որ հրատարակել է Կ. Կոստանեանց†։ Այս երկրորդն իսկապէս առաջնի շարունակութիւնն է, սահմանափակուած միայն Աթոռի նորոգութեան խնդրով, և կարող էր առաջնի հետ մի ամբողջութիւն կազմել։ Ձեռագիրների մէջ միշտ կցուած է այն Պատմութեանը և այնպիսի ընդհանուր վերնագիր չունի այդ երեք գլուխներից բաղկացած աշխատութիւնը, ինչպէս հրատարակիչն է տուել։ Նոքա երկուսը միասին տալիս են մօտ վաթսուն տարուայ պատմութիւն, ինչպէս և գրել է Թովմայի կենսագրութեան հեղինակ Կիրակոս Բանասէրը. «Եւ գրեաց պատմութիւն Կ տարւոյ, ի ՊԼԵ

---

* Սա եւս Մեծոփայ վանքի մեծ վարդապետներից մէկն է։ տես մեր տետրակը. Մխիթար Սասնեցի. Վաղարշ. 1899 թ.։

** Նօտարք 156. 185. 191.

*** «Պատմութիւն Լանկ-Թամուրայ եւ Ցաջորդաց իւրոց արարեալ Թովմա վարդապետի Մեծոբեցւոյ»։ Felix Nève-ի աշխատութիւնները Թովմայի մասին տ. Զարբհ. Մատենագիտութիւն. Վենետ. 212։

† Թովմա Մեծոփեցու Ցիշատակարանը. Թիֆլիս. 1892.